ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 նոյեմբերի 2023 թվականի N 451 - Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԴԵԼՅԱՆ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և ի կատարումն 2023 թվականի օգոստոսի 17-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած՝ ՀՀ Սյունիքի մարզի 2022 թվականի հաշվետվության մասին խորհրդակցության N Վ/161-2023 արձանագրության 3.2.17-րդ կետի հանձնարարականի՝

որոշում եմ.

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Ադելյան 5 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի հետ կապված խնդիրների առաջացման պատճառները և դրանց լուծման հնարավորությունը ուսումնասիրելու նպատակով:
2. Հաստատել աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Աշխատանքային խմբին՝ որոշման 1-ին կետում նշված աշխատանքներն իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 13-ից 15-ը ներառյալ:
4. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի փորձագետ Ռազմիկ Ավետիսյանին՝ որոշմամբ նշված աշխատանքներն ավարտելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել աշխատանքային խմբի կողմից կազմված եզրակացությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 7
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023 թվականի նոյեմբերի 7-ի
N 451-Ա որոշման

ԿԱԶՄ

Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Ադելյան 5 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի հետ կապված խնդիրների առաջացման պատճառները և դրանց լուծման հնարավորությունը ուսումնասիրելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի

Ռազմիկ Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի փորձագետ (աշխատանքային խմբի ղեկավար)

Վարազդատ Առաքելյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության շինարարության քաղաքականության և գնագոյացման մեթոդաբանության բաժնի փորձագետ (համաձայնությամբ)

Արմիկ Անտոնյան - ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Սյունիքի տարածքային բաժնի ավագ մասնագետ (համաձայնությամբ)

Էմիլ Ադամյան - «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի «Հարավ» ՇՏ «Մեղրի» տեղամասի պետ (համաձայնությամբ)

Մկրտիչ Մկրտչյան - Մեղրիի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության, գույքի կառավարման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ):

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար

Է. Մարտիրոսյան